ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

1. Անհրաժեշտությունը

Օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրից բխող մեծ թվով բնակելի և հասարակական նշանակության (կրթական՝ նախադպրոցական և դպրոցական, առողջապահական, գյուղատնտեսական և այլն) հաստատությունների նոր մասնաշենքերի կառուցման համար առաջիկա տարիներին բազմակի օգտագործման նախագծերի կիրառման պահանջով:

2. Ընթացիկ իրավիճակը

Տարբեր նշանակության քաղաքաշինական օբյեկտների, մասնավորապես, նախադպրոցական և դպրոցական մասնաշենքերի և շինությունների հիմնական մասի համար պահանջվում են նմանատիպ հզորություններով, կարողություններով համալրված ուսումնական, մարզական կամ վարչական արդի կոնստրուկտիվ լուծումներով մասնաշենքեր:

Մեծաքանակ պահանջարկի պարագայում, մասնակի փոփոխությունների (ոչ կոնստրուկտիվ լուծումների մասով) նախատեսմամբ, բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կիրառումը համարվում է տնտեսապես շահավետ և նպատակահարմար:

Այսինքն, լիազոր մարմնի ղեկավարի հրամանով հաստատված օրինակելի նախագծային փաստաթղթերի հիմնական լրակազմի մասով խնդիրները գրեթե բացակայում են և հետագա գործընթացները դիտարկվում են միայն տեղակապման միջոցառումների շրջանակներում, ինչը գործնականում կնախատեսի ծախսերի և ժամանակի խնայողություն:

Ծախսերի հաշվարկման և խնայողության վերաբերյալ

Քանի որ հաստատված օրինակելի նախագծերում, տեղակապման խնդիրները վերաբերում են հիմնականում կառույցների 0-ական փուլին՝ ապա հարկ է նշել, որ ՀՀ քաղաքաշինության նախարարի 15.02.2008թ. N 19-Ն հրամանով կարգավորվում են նաև

վերջիններիս համար անհրաժեշտ նախագծային փոփոխությունների (առանց վերգետնյա հատվածի) ծախսերը՝ ըստ հաստատված (20%) նորմատիվի, որը պետք է կիրառվի նախագծային աշխատանքների ամբողջ արժեքի նկատմամբ: Օրինակ, եթե օրինակելի նախագծի արժեքը կազմել է 10,000.0 հազ.դրամ, ապա վերջինիս տեղակապման ծախսերը (յուրաքանչյուր տարածքի համար) կկազմեն 10,000.0 x 20%= 2000.0 հազ.դրամ: Իսկ թվով 6 դպրոցների մասով տեղակապման ծախսերը կկազմեն 6x2000.0 հազ.դրամ = 12000.0 հազ.դրամ:

Բազմակի օգտագործման նախագծերի չկիրառման պարագայում՝ կառուցվող 1 կրթական օբյեկտի (կամ մասնաշենքի) համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման արժեքը տատանվում է 5000.0 հազ.դրամից մինչև 25000.0 հազ.դրամ:

Շինարարական աշխատանքների մոտավոր ծախսերը կարող են հաշվարկվել ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.04.2009թ. N 35-Ն հրամանով հաստատված խոշորացված ցուցանիշների կիրառմամբ, խորհրդատվական ծառայություններինը՝ տեխնիկական և հեղինակային հսկողությունների ծախսերը՝ ՀՀ կառավարության 23.06.2011թ. N 879-Ն հրամանի համաձայն:

Բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կիրառում և ծրագրի իրագործման ժամկետի կրճատում

Կառուցվող (միջին ծավալի 1500-5000 քմ) 1 շինարարական օբյեկտի նախագծման տևողությունը կազմում է մինչև 8-10 ամիս, կամ շուրջ 300-350 օրացուցային օր: Հաստատված օրինակելի Նախագծերի տեղակապման (0-ական նիշ) պարագայում անհրաժեշտ ժամանակահատվածը չի գերազանցի նախագծի մշակման ընդհանուր տևողության 30%-ը:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 7-ի N 814-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և դրանց կատալոգների ներդրման ու կիրառման կարգը»:

Միաժամանակ հարկ է նշել, որ «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունումը լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջացնում:

Բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի սահմանում, նշված նախագծերով իրականացվող շինարարական ծրագերի հեղինակային հսկողություն, գնման ընթացակարգեր

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի հոդված 6-ի համաձայն Կառուցապատողները պարտավոր են՝ պահպանել հեղինակային իրավունքի նորմերը, ապահովել քաղաքաշինական օբյեկտի նախագծի գործնական իրականացման ընթացքում հեղինակային հսկողությունը՝ օրենքով սահմանված կարգով, եթե նախագծային աշխատանքների կապալի պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ինչը վերաբերելի է նաև բազմակի օգտագործման օրինակելի նախագծերին, որտեղ Նախագծողների կողմից մշակվում են օրինակելի նախագծերով նախատեսված շենքերի/շինությունների ստորգետնյա հատվածների տեղակապման նախագծերը և դրանց մշակման, համաձայնեցման, հաստատման ու փորձաքննության ընթացակարգերը սահմանվում են ՀՀ կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշմամբ (այսուհետ՝ որոշում) հաստատված կարգի համաձայն:

Որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ***բազմակի օգտագործման օրինակելի նախագծերը՝ քաղաքաշինության բնագավառի պետական լիազորված մարմնի կողմից կիրարկման մեջ դրված ճարտարապետաշինարարական նախագծեր են***, որոնք կարող են օգտագործվել տարբեր կառուցապատողների կողմից՝ իրենց ցանկությամբ:

Հեղինակային հսկողությունը, ինչպես ճարտարապետաշինարարական այլ նախագծերի պարագայում, այնպես էլ բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի դեպքում պետք է վերապահվի տեղակապման նախագծերի հեղինակներին՝ այն է՝ տեղակապման նախագծեր մշակող Նախագծային կազմակերպությանը, հաշվի առնելով, որ նշված որոշման՝

12-րդ կետի համաձայն՝ Նախագծին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին շինարարական աշխատանքների համապատասխանությունն ապահովվում է շինարարական աշխատանքներն իրականացնող կապալառուի (ենթակապալառուի) և տեխնիկական հսկողություն (***օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում՝ նաև հեղինակային հսկողություն***) իրականացնող կազմակերպության (կազմակերպությունների) կողմից,

142-րդ կետի համաձայն՝ Կատարողական փաստաթղթերի փաթեթը կազմում է կապալառուն՝ տեխնիկական հսկողություն, ***օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում՝*** հեղինակային հսկողություն իրականացնող անձանց մասնակցությամբ:

12-րդ կետի համաձայն՝ Բազմակի (կրկնակի) օգտագործման օրինակելի նախագծերի և սերտիֆիկացված նախագծերի կիրառման դեպքում ***փորձաքննության են ենթակա միայն օբյեկտի զրոյական նիշից ներքև տեղակայված կառուցվածքների նախագծային փաստաթղթերը (տեղակապման նախագծերը): Ընդ որում, II կատեգորիայի դասակարգում ունեցող՝ սույն կետում նշված օբյեկտների տեղակապման նախագծերի փորձաքննությունը ևս կարող է փոխարինվել երաշխավորագրով:***

Ինչ վերաբերում է ***հեղինակային հսկողության ծառայության գնմանը***, ապա այն կարգավորվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով՝ մեկ անձից (եթե գնման գինը չի գերազանցի գնումների բազային միավորը) կամ մրցութային ընթացակարգերով իրականացվող գնումների կազմակերպման՝ համապատասխան պայմանագրերի կնքման միջոցով:

Միաժամանակ հարկ է նշել, որ ճարտարապետաշինարարական նախագծերով (այդ թվում բազմակի օգտագործման օրինակելի նախագծերով) իրականացվող շինարարական ծրագրի հեղինակային հսկողության ապահովման վերաբերյալ առկա է նաև ՀՀ քաղաքաշինության նախարարության 28.09.1998թ. N 143 հրամանը՝ «Շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության իրականացման հրահանգը», որի համաձայն Հեղինակային հսկողությունն իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, Պատվիրատուի և Հեղինակի միջև կնքված հեղինակային հսկողության պայմանագրի համաձայն:

3. Առաջարկվող կարգավորման բնույթը

Նախագծով նախատեսվում է օրենքով կարգավորել կառուցապատողների կողմից բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կիրառման հնարավորությունը:

Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով,

2. Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն նախաձեռնել է «Քաղաքաշինության մասին» օրենքում համապատասխան լրացումների գործընթաց, որոնցով նախատեսվում է կառուցապատողներին վերապահել իրավունք քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական մարմնի ղեկավարի հրամանով հաստատված բազմակի օգտագործման նախագծերի կիրառման և դրանցով հիմնավորված շինարարական ծրագրերի մեկնարկի, իրականացման և ֆինանսավորման համար՝ մինչև այդ նախագծերի տեղակապման ավարտը:

Ընդ որում՝ բազմակի օգտագործման նախագծերի տեղակապման ավարտի ժամկետը նախատեսվել է սահմանել Կոմիտեի կողմից (պատվիրատվությամբ) ներկայումս մշակված (մշակվող) և առաջիկայում Կոմիտեի Նախագահի հրամաններով հաստատման ենթակա գերատեսչական նորմատիվ ակտերի՝ «Տարբեր նշանակության օբյեկտների նախագծային աշխատանքների տևողության ժամանակավոր նորմերը հաստատելու մասին» և «Նախագծային աշխատանքների տևողության նորմեր» (պետական գնման պայմանագիր՝ ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/35, 30.09.2021թ) փաստաթղթերի շրջանակներում՝ ամրագրելով հետևյալ ձևակերպումը՝ «ոչ ուշ՝ քան հաստատված օրինակելի նախագծերի մշակման համար սահմանված ընդհանուր տևողության ժամկետի 30%-ը»:

3.1 Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք

Հոդված 10.1՝ «Կոմիտեն՝

….մշակում և վարչապետին է ներկայացնում քաղաքաշինության բնագավառի զարգացումն ապահովող և գործունեությունը կարգավորող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծեր.

...հաստատում է շենքերի և շինությունների բազմակի օգտագործման օրինակելի ու փորձարարական նախագծերը և դրանք առաջադրում կիրարկման:»:

ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշում

Կետ 2.7՝ Կառավարությունը նախատեսում է բնագավառի *օրենսդրական և նորմատիվային դաշտի բարելավման*, քաղաքաշինության բնագավառում իրականացվող գործունեությունների և թույլտվությունների տրամադրման համակարգերի առավելագույն թվայնացման, քաղաքաշինական օբյեկտների վերաբերյալ տեղեկատվական համակարգերի ներդրման միջոցով ստեղծել նախադրյալներ՝ առկա խնդիրները լուծելու (*ընթացակարգերի պարզեցում*, թափանցիկություն և հաշվետվողականության բարձրացում....) և հետագա զարգացումներն ապահովելու համար:

ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշում

Հավելված N1, բաժին «Քաղաքաշինության կոմիտե», կետ 5.3 (Միջոցառում, Ակնկալվող արդյունք)՝ «Բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի ցանկը և ընդհանուր բնութագրերը հաստատելու մասին» Քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանի նախագծի մշակում (Նախագծի մշակման և համակարգման աշխատանքներ, ծրագրային առաջարկների մշակում բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի տեղակապման, փորձաքննության և բյուջետային ծրագրերի շրջանակներում նմանատիպ նախագծերի ձեռքբերման համար ֆինանսական միջոցների նախատեսման վերաբերյալ), «Բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի հիմքով՝ բյուջետային և ՄԺԾ ծրագրերի հիմնավորում, նոր մշակված օրինակելի նախագծերով ցանկի պարբերաբար համալրում՝ Կառավարության 2012 թվականի հունիսի 7-ի N 814-Ն որոշման համաձայն», «Տեղակապվող օրինակելի նախագծերով քաղաքաշինական ծրագրերի ներդրում, ծրագրերի ընդհանուր տևողության մինչև 30%-40% և նախագծային աշխատանքների արժեքի շուրջ 60%-70%-ով նվազում»:

ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «ՀՀ քաղաքաշինության բնագավառի ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 531-Լ որոշում

Կետ 46՝ «Տարբեր նշանակության շենքերի ու շինությունների կառավարման, հուսալի և անվտանգ շահագործման, սեյսմակայունության բարձրացմանն ուղղված միջոցառումների արդյունավետ իրականացման, համակարգված և թիրախային մոտեցումների մշակման նպատակով նախատեսվում է՝ նորագույն տեխնոլոգիական լուծումներով սեյսմակայուն (*մի շարք դեպքերում նաև բազմակի կիրառման*) նախագծերի իրագործմանը նախապատվություն տալու սկզբունքի ներդրում՝ նորմատիվ պահանջների սահմանմամբ:»

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից

5. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կիրառման հատուկ պահանջների ապահովումը և համապատասխան իրավունքների վերապահումը կառուցապատողներին: